— Ինչպէ՞ս էր կոչւում ձեր հօր եղբայրը:

— Խան-Մահմուդ:

— Իսկ այն Մելիքը՞, որին խաբէութեամբ սպանել տուեց ձեր հօր եղբայրը:

— Միր-Մարտոյ: Նա իմ լաւ բարեկամս էր. նրա եօթը որդիներից ամենակրտսերին, Կարօյին, ես եմ եկեղեցի տարել մկրտութեան ժամանակ: Բայց բոլորին կոտորեցին, ոչ մէկը չմնաց...

Կարօյի անունը տալու ժամանակ ես նայեցի Ասլանի երեսին: Նա աչքով արեց, որ լռեմ: Քուրդը շարունակեց.

— Այո՛, նա իմ լաւ բարեկամս էր. շատ անգամ միմեանց հետ «հաց ենք կտրել». շատ անգամ միմեանց հետ որսի ենք գնացել: Նա աննման մարդ էր: Նրա պէս քաջ, նրա պէս մեծահոգի չկար ոչ միայն հայ ազնուականների մէջ, այլ բոլոր քուրդ բեկերի մէջ:

Երեւի, ազնիւ քուրդը շատ կուրախանար, եթէ ասէի, որ նրա լաւ բարեկամի որդին, իր կնքել տուած Կարօն, ազատուել էր սարսափելի կոտորածից եւ այժմ կենդանի էր: Ես այդ կոտորածի պատմութիւնը լսել էի շատ առաջ, Կարօյի տատ Զումրուդից, երբ նա մահուան անկողնի մէջ պատմում էր անբախտ որդու հօր ցաւալի արկածը:

— Բայց աստուած պատժեց իմ հօր եղբօրը, — առաջ տարաւ քուրդը, — իր բարեկամի եւ դաշնակցի հետ այդպէս վատութեամբ վարուելուց յետոյ եւ խաբէութեամբ այդ բերդին տիրելուց յետոյ երկար վայելել չկարողացաւ...

— Ինչպէ՞ս, — հարցրեց Մուրադը:

— Նա միացաւ այնուհետեւ Ջեզիրէին տիրող անգութ Բեդիր-խան-բէկի հետ, եւ երկուսը միասին սկսեցին անխնայ կերպով ասպատակել, աւերակ դարձնել Վանի, Մուշի, մինչեւ Դիարբեքիրի նահանգները, եւ ամէն տեղ, որտեղ հայ կար, սրից անցկացնել: Այդ լսելով Ստամբուլի հայոց խալիֆան (Մատթէոս պատրիարքը) բողոքեց սուլթանին, եւ սուլթանը բազմաթիւ զօրքերով ուղարկեց Օսման փաշային՝ պատժելու ապստամբներին: Օսման փաշան եկաւ, նա ոչինչ անել չէր կարող, եթէ հայերը չօգնէին նրան:

— Հայերը ինչո՞վ օգնեցին, — հարցրեց Մուրադը:

— Ստամբուլի հայոց խալիֆան թուղթ էր գրել Վանի, Մուշի, Դիարբեքիրի եւ միւս նահանգների հայոց բոլոր հոգեւոր առաջնորդներին, որ իրանց ժողովրդի հետ օգնեն սուլթանի զօրքերին: Այդ ժամանակ յայտնուեցաւ Մելիք-Միսաքը եւ հայոց կամաւոր զօրքերի գլուխն անցաւ: Քաջութեամբ պա-